


37

---

L-32

1 MAR 20

37  
L-39



ՀԱՍԿԵՌԻ

ՄԱՆԿԱԲՈՒԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

XVI

ՌՈՒԴՕՒՆ ԼԵՄԱՆ

ԺԱՌԱՆ ԳԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

ՈՒ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. գերմաներէնից Լևոն Բաբայեան

Թ Ի Յ Լ Ի Ս

ԷԼԷՔՏՐՈՆՈՐ ՏՊԱՐԱՆ ՕՊ. Ն ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7.

1908



30.04.2013

«ՀԱՍՏԿԵՐ»-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

37  
- 39  
Կ

XVI

ՌՈՒԴՕՒՆ ԼԵՄԱՆ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

ՈՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. դերման. ԼԵՒՈՆ ԲԱՐԱՑԵԱՆ

Թ Ի Յ Լ Ի Ս

ԵՆԵՔՏՐԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՏԻ, ՊՕԼԻՑ. 7.

1908



On façonne les plantes par la culture et les hommes par l'éducation.

Rousseau.

Բոյսը ձեակերպւում է մշակելով, մարդը կրթւելով:

Россо.

Մաստիարակելու հնարաւորութիւնը: Պատմական հայեացք դաստիարակութեան զարգացման վրա: Ժառանգականութեան օրէնքն եւ նրա հետեւանքները: Այդ հետեւանքների սահմանափակ լինելը: Չարգացման տեսութիւնը: Եզրակացութիւններ դաստիարակութեան հնարաւորութեան եւ նշանակութեան մասին: Մաստիարակութեան էութեան ժամանակակից պատկերը: Անդհանուր ակնարկ:

Կարող է դաստիարակութիւնը կերպարանափոխել եւ շօշափելի ազդեցութիւն ունենալ ազգերի եւ առանձին անհատների կեանքի վրա, եթէ ի նկատի ունենանք բնական տրամադրութիւնների եւ հակումների զօրութիւնը եւ մանաւանդ ժառանգականութեան անխախտ օրէնքը: Այդ ժառանգած հակումները արդեօք չեն ստիպում ազգերին եւ անհատներին մնալու որոշ սահմաններում եւ շրջանակում, արդեօք զբանց վերաբերմամբ բանական դաստիարակութիւնը անզօր, անօգնական չէ: Եւ եթէ այդ այդպէս է, էլ ի՞նչ միտք



և նշանակութիւնն ունի իդէալական նպատակներին դիմող մանկավարժութիւնը: Միթէ իսկական մարդկային կրթութիւնը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի ցնորք: Եւ առհասարակ հնարաւոր է դաստիարակութիւնը, բարձր մտքով:

Այս հարցը ներկայ դարունն է որ մի իսկական հանելուկ է դարձել:

«Մարդ միայն դաստիարակութեան շնորհիւ կարող է մարդ դառնալ: Նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ դաստիարակութեան արդիւնքը»: Նշանաւոր փիլիսոփայ Կանտի այս խօսքերը XVIII-րդ դարու հիմնական կրթիքներից մէկն են արտայայտում: Լուսաւորութեան այդ դարում դաստիարակութեան՝ աշխարհ կերպարանափոխող ուժին այնպէս ամուր էին հաւատում, որքան ամուր հաւատում էին ամենազօր բանականութեան ուժին: Մարդ դաստիարակել նշանակում էր նրան բանական դարձնել և սովորեցնել իր ուժերը կանոնաւոր կերպով գործադրելու: Անհատի ամբողջ մտաւոր կեանքը հիմնուում է բանական փորձառութեան վրա. մանկան բանական փորձառութեան հիմքը դնել, ղեկավարել և ուղղութիւն տալ նշանակում էր իսկական մտքով կրթել երեխայի հոգին:

Այդ ուսմունքի, այն է՝ ռացիօնալիզմի տեսակէտով ամեն մարդ հաւասարապէս կարող է փոխել այդտեսակ բանական դաստիարակութեան շնորհիւ: Ի՞նչ կարող էր լինել մարդկային մտքի մէջ կամ նրանից դուրս, որ կարողանար երկարատե դիմադրութիւն ցոյց տալ բանականութեան յաղթական գորութեանը:

Անհատական հակումների տարբերութիւնները թէև կարող են դաստիարակութիւնը հեշտացնել կամ դժարացնել, բայց էութեամբ վերցրած ամեն մարդ հաւասարապէս կարող է դաստիարակել և դաստիարակութեան նպատակը ամեն տեղ միևնոյնն է: «Ամեն տեղ մարդկանց կարելի է այն դարձնել, ինչ որ նախօրօք մտածել ես և երբ նրանց քո ցանկացածի պէս ես փոխում, անում ես այդ թէ նրանց և թէ ուրիշների օգտին»: Այս խօսքերովը է վերջացնում Ռուսսօն դաստիարակութեան ներած իր կրօնիկ աշխատութիւնը:

Ամենքը, «վայրենի մոնղոլից սկսած մինչև յոյն աստղաբաշխը», չընայելով որ «գոյնով, զգեստով և կերպարանքով միմեանցից տարբերում են», ռացիօնալիզմի կարծիքով, իրանց ներքին աշխարհի ու հակումների էութեամբ համանման են և միահաւասար արժէքն ունեն: Ամենքը առաքինի են ծնւած, բարի տրամադրութիւն ունեն և հաւասարապէս օժտւած են բանականութեամբ: Իէպի մարդկային ընութեան հաւասարաչափ բարի լինելը ունեցած այդ անխախտ հաւատը կազմում է լուսաւորութեան դարի բոլոր գործնական իդէալների հիմքը—այն է՝ ազատութեան և եղբայրութեան իդէալների, որ յայտարարեցին այդ միևնոյն դարի ներկայացուցիչները: Միայն պատմութեան ընթացքում առաջացած ջաղաքական, սօցիալական և եկեղեցական պայմանների անընականութիւնն և անարդարութիւնն է, որ զլլաւորապէս արգելք են հանդիսանում այդ իդէալների իրականանալուն: Նրանք են միայն մեղաւոր, որ մարդկանց մեծամաս-



նութիւնը չի կարողանում իր բնական հակումները զարգացնել: Բայց երբ աջողում է այդ արտաքին պայմաններին յաղթել,—երբ բանականութեան դաստիարակչական ազդեցութեանը ազատութիւն է տրւում, այն ժամանակ վերանում են այն արհեստական արգելքները, որոնք բնական զարգացումը խանգարում և սահմանափակում են: Անհատական հակումների ուժը լուսաւորութեան դարում դեռ ևս քննութեան խնդիր չէր դարձել և այն ժամանակայ մանկավարժութիւնը կարող էր հանգիստ որոնել այն ընդհանուր կանոնները, որոնց շնորհիւ մարդ մի անգամ ընդ միշտ կարող էր իդէալապէս դաստիարակել:

Սակայն լուսաւորութեան դարի գեղեցիկ և հրաշնելի երազը վերջացաւ Ֆրանսիական յեղափոխութեան արհաւիրքի շնորհիւ: XVIII-րդ դարու վերջերում և XIX-ի սկզբներում տեղի ունեցաւ այդ աշխարհայեցողութեան կատարեալ յեղաշրջումը: Այդ ամենից առաջ սկսեց գերմանական բանաստեղծութեան և փիլիսոփայութեան մէջ և այնուհետև հետզհետէ անցաւ կեանքի միւս ասպարէզներն և ուրիշ ազգերին: Ռոմանտիզմն էր այն մտաւոր հոսանքը, որի շնորհիւ ռացիոնալիզմին մի բոլորովին հակառակ աշխարհայեցողութիւն երևան եկաւ: Ռոմանտիզմը չուզեց լուսաւորութեան դարի պէս միայն բացառապէս բանականութիւնը պաշտել և ցոյց տւել թէ ինչ մեծ նշանակութիւն ունի մարդկային զգացմունքը, հակումը, երեւակայութիւնը և հոգեկան ուրիշ շատ կողմերը, մի խօսքով այն ամենը, ինչ որ ներկայումս հասկացւում

է «հոգեկան կեանքի անբանական (irrational) կողմը» ասելով: Դրա մէջ էր տեսնում ուսմանտիզմը մարդու իսկական էութիւնը և միևնոյն ժամանակ նրա արժէքը, և ուսմանտիզմի իմաստասէրներն և բանաստեղծները մի առանձին հաճոյքով մատնացոյց էին անում բանականութեան անզօրութիւնն և այն արգելքները, որ նրան դնում են զգացմունքն և մարդկային հոգու միւս ուժերը:

Վերոյիշեալի հետ սերտ կերպով կապած է այն, որ ուսմանտիզմը, հակառակ լուսաւորութեան դարի ընդհանուր հաւասարութեան և նմանութեան գաղափարին, միշտ մի առանձին սիրով անհատական էր շեշտում. ամեն մի առանձին անհատ, ամեն մի առանձին ժողովուրդ և մի առանձին դար ունի իր որոշ ինքնուրոյնութիւնն ու պատմական զարգացումը,—և դրանք են ահա որ ուսմանտիկ մտքի ամենամեծ հետաքրքրութեան առարկաները դառան: Այդ բանի համար վճռական նշանակութիւն ունէր և գիտական այն շարժումը, որ սկսել էր կենսաբանութեան (բիօլոգիայի) մէջ Գեթթէի հայեացքների և ուսումնասիրութիւնների շնորհիւ և որը յետոյ եղաւ ընդհանուր մտածելակերպը:

Այն եղանակը, որով XVIII-րդ դարը ուսումնասիրում էր արտաքին աշխարհը և մարդկանց, պարզապէս հետևանք էր մեքենայական-ֆիզիքական գիտութիւնների ազդեցութեան: Ինչպէս աշխարհս, այնպէս էլ է մարդկութիւնը նրա աչքում իր էութեամբ հաւասար ուժերի մի մեծ սխտեմ էր, որի մէջ էլ իւրա-



քանչիւր անհատ՝ մի հաւասարարժէք և հաւասարանման ուժի կենտրոն էր:

Վերոյիշեալ մեքենայական ուսումնասիրութեան եղանակի փոխարէն կենսաբանութիւնը, բիօլօգիան առաջ բերաւ օրգանական հայեցակէտը: Այդ օրւանից ի վեր մարդկային աշխարհն ուսումնասիրելու ելակէտը կազմուեմ էր կենդանի և օրգանական բնութիւնը և ոչ թէ տիեզերքի մեքենայօրէն գործող ուժերը: Գեօթէի և նրա կողմնակիցների սիրող հայեացքը թափանցեց բոյսերի և կենդանիների բազմազան տեսակների մէջ և շատ բնական էր, որ այդ ուսումնասիրութիւնից ստացած արդիւնքներն ու հայեցակէտերը փոխադրուէին նաև մարդկանց աշխարհը: Կենդանիները և անհատները այլևս ոչ թէ համարուեմ էին համանման և համարժէք ուժերի կենտրոններ, այլ օրգանիզմներ— վերին աստիճանի բարդ կազմաձևեր, ներքուստ օժտուած առանձին զարգացման հակումով և տրամադիր՝ տարբեր (որոշ և սահմանափակ) ձևով կրթւելու:

Թէև օրգանական տեսութեամբ, որ բոլորովին հակառակ էր մեքենայական ուսումնասիրութեան եղանակին, դեռ ևս գիտութեան վերջին խօսքը չսսւեց, սակայն գրանով մարդկային գործերի բնական ըմբռնողութիւնը բաւականաչափ խորացաւ և հարստացաւ: Բացի դրանից այդօրինակ ըմբռնողութեան շնորհիւ ի հարկէ առաջ եկան նոր, մինչև այդ ժամանակ անյայտ խնդիրներ, երևան եկան նոր դժարութիւններ և արգելքներ, որոնց ռացիօնալիզմի դարը բոլորովին անտես էր արել: Այդ օրւանից ի վեր այլ ևս

խօսք չէր կարող լինել անհատի անսահման զարգացման ընդունակութեան մասին. իւրաքանչիւր արարած կեանք ստանալով իր հետ բերում է միանգամ ընդ միշտ որոշ և սահմանափակ նախատրամադրութիւն և հակում և ոչ ոք չի կարող դուրս գալ այդ նախատրամադրութեան իրեն յատուկ սահմաններից: Սակայն շատ նեղ են այդ սահմանները, որ բնութիւնը առանձին անհատների զարգացման համար է նախորոշել, և արտաքին ամեն տեսակի ազդեցութիւն կենդանու և մարդու վրա շատ անզօր և չնչին է, եթէ ոչ բոլորովին անհնարին: Այդ եզրակացութեան է եկել նաև Գեօթէն, որ և արտայայտուեմ է իր մի քանի գրւածքներում:

Նոյնտեսակ է մտածուեմ նաև Շոպենհաուէրը, որ այդ հայեացքները վերցրել է Գեօթէից և Շելլինգից և սուր կերպով արտայայտել է հետևեալ խօսքերով. «Մարդու բնաւորութիւնը անփոփոխ է և ամբողջ կեանքում միևնոյնն է մնում... Մարդ կրէք չի փոխուեմ»:

Այդպիսով բանականութեան ամենակարող լինելը կատարելապէս հերքուեմ է: Նա ոչ կարող է որևէ վճռական ներգործութիւն ունենալ օրգանական զարգացման վրա և կերպարանափոխել այն, ինչ որ բնութիւնը միանգամ տրամադրել և նախորոշել է, ոչ էլ կարող է բնատուր, բնածին հակումներն ու կրքերը փոխել կամ որոշ ժամանակով ճնշել, քանի որ դրանք չեն ենթարկուեմ բանական մտածողութեան յաղթական լոյսին և իրանց խաւար ուժերին են հետևուեմ:

Սակայն դրանով հարց է ծագուեմ թէ արդեօք դաստիարակութիւնը ունի՞ որևէ նշանակութիւն և



ուժ և թէ առհասարակ դաստիարակութիւնը հնարաւոր բան է, որքան ի հարկէ նա շօշափում է մարդու իսկական էութիւնը—նրա հոգեկան հակումները և բարոյական յատկութիւնները: Չէ որ իւրաքանչիւր դաստիարակութիւն ամենից առաջ արտաքին ազդեցութիւն է. ինչպէս կարող է նա ուրեմն ազդել կամ բոլորովին դիմադրել այն ներքուստ ներգործող օրգանական ուժին, որ բնորոշում է առանձին անհատին:

Եւ դաստիարակութիւնը նախ և առաջ գլխաւորապէս բանական ազդեցութիւն է. եթէ բանականութեան ազդեցութիւնը շատ չնչին է, ուստի չափաւորւում է նաև դաստիարակութեան ազդեցութիւնը:

Եւ ինչ: Ահա Շոպէնհաուէրը իրեն յատուկ խիստ ոճով և վճռականապէս բնդհանուր հիմնական հայեցակէտից առաջ դալով՝ եկաւ հետեւեալ բացասական եզրակացութեանը. «Մի ձեռնարկութիւն, որի նպատակն է մարդու բնաւորութեան սխալները ճանաչել և բարոյակրթութեան շնորհիւ ուղղել և նրա բնաւորութիւնը կերպարանափոխել, նման է այն աշխատանքին, որով ցանկանում են կապարը արտաքին ազդեցութեամբ ոսկի դարձնել կամ կաղնի ծառը այնպէս խնամել, որ նա ծիրան տայ»:

«Մարդս ոչ այլ ինչ է, եթէ ոչ իր ստացած դաստիարակութեան արդիւնքը», այսպէս էր ասում Կանտը, որի այս խօսքերի մէջ ամփոփւած է ռացիօնալիզմ կոչւած ուղղութեան մանկավարժական հայեացքը: Սրան լիակատար հակառակ միտքն են պարուսակում Շոպէնհաուէրի հետեւեալ խօսքերը. «Մարդու

անհատական բնաւորութիւնը բնածին է. նա ոչ արեւստի և ոչ էլ պատահմունքի գործ է, այլ բնութեան գործ: Նրա հիմնական զծերը նոյն իսկ ժառանգական են»:

Վերջին խօսքերը ցոյց են տալիս մտքի այն փոփոխութիւնը, որ առանձնայատուկ է XIX-րդ դարու հայեցակէտին և որից պէտք է ծագեն մանկավարժութեան համար մի քանի էական կասկածներ և զբժարութիւններ:

Սակայն ժառանգակալութեան փաստը նոր դիւտ չէ: Դեռ Պլատոնը այդ փաստը ի նկատի է առնում պետութեան և դաստիարակութեան վերաբերեալ իր տեսութեան համար: Ժառանգականութեան փաստը ծանօթ էր նաև XVIII-րդ դարում: Սակայն երբ այդ փաստը մեր դարում առաջին անգամ ճանաչեց իրրև անխախտ օրէնք և սկզբունք, նա մի այնպիսի նշանակութիւն ստացաւ, որ ամբողջապէս յեղաշրջեց աշխարհիս և մարդկանց մասին մեր ունեցած հասկացողութիւնը: Մեզ համար արդէն սովորական բան է դարձել, թէ մարդկութեան կեանքում և թէ բնութեան մէջ տեսնել ժառանգականութեան ազդեցութիւնը: Այդ հայեցակէտով ենք մենք նայում ծագման, ազգայնութեան և ընտանիքի բնական կապակցութիւնների վրա. դրա համար էլ մեր աչքում անխուսափելի և կարևոր է այն, ինչ որ ռացիօնալիզմը անէական և պատահական էր համարում: Հէնց դրա համար էլ ընդունում ենք որ առանձին անհատի բնաւորութիւնը և մտաւոր կարողութիւնը բոլորովին կախած է նրա ծագումից



և կապւած է ժառանգական տրամադրութեան հետ: Դու չես կարող ոչ միայն «քեզանից խուսափել», ինչպէս ասում էր Գեօթէն, այլ ե խուսափել նոյն իսկ քո հայրերից և նախահայրերից, որոնց բնորոշ յատկութիւնները ամեն կողմից քեզ ճնշում և քո զարգացումն են ասես որոշում:

Ամենից առաջ և ամենից պարզ այդ ճշմարտութիւնը աչքի է ընկնում բնախօսական տեսակէտից, և բժշկական գիտութիւնն ու պրակտիկան է զբան ամենից մեծ արժէք տւել և գնահատել: Որ զաւակները իրանց արտաքին կերպարանքը ժառանգում են ծնողներից, այդ բանը իմացել են նաև հին դարերում, սակայն այն ժամանակայ մարդիկ չեն մտածել այդ փաստից նոր եզրակացութիւններ հանելու: Ժամանակակից գիտութիւնը մեզ արդէն ասել է, որ մարդու ամբողջ մարմնի կազմւածքը իր բոլոր անհատական առանձնայատկութիւններով ժառանգականութեամբ է պայմանաւորւած: Ժողովուրդներն ու ընտանիքները ժառանգաբար պահպանում են թէ մարմնական բարեմասնութիւններն ու առաւելութիւնները և թէ թերութիւններն ու պակասութիւնները: Որ շատ ընտանիքներ ժառանգում են որոշ հիւանդութիւնների տրամադրութիւններ, դա էլ նոյնպէս նոր գիւտ չէ. սակայն վերջին դարիս ուսումնասիրութիւնն և փորձառութիւնն է այդ երևոյթի ամբողջ կարեւորակութիւնը պարզաբանել. այդ դարն է մեզ սովորեցրել ժառանգական կապեր տեսնել այնտեղ, ուր ռովորական մարդու աչքը չէ նկատում (օր. առաջին սերնդի արբեցողութեան և երկ-

րորդ սերնդի որոշ հիւանդութիւնների մէջ). բացի զբնական նորագոյն գիտութիւնը մեզ սովորեցրել է, թէ որքան սերտ և անխուսափելի են շատ դէպքերում վերոյիշեալ ժառանգական կապերը:

Սրանից հետևում է և այն, որ այդ բոլոր գիւտերը մարդու հոգեկան կեանքի համար էլ վճռական նշանակութիւն ունեն: Ամենօրեայ փորձը ցոյց է տալիս, որ մտաւոր տրամադրութիւններն և բարոյական յատկութիւններն էլ մարմնականի նման ժառանգաբար անցնում են յաջորդ սերնդին. այդ բանը հաստատում է նաև գիտութիւնը: Թէև փիլիսոփայութիւնը և կրօնագիտութիւնը ուրիշ կարծիք ունեն մարմնի և հոգու մէջ գոյութիւն ունեցող մետաֆիզիքական կապի մասին, բայց փորձնական գիտութիւնը չի կարող ուրանալ այն փաստը, որ զբանք իրար վրա փոխադարձ ազդեցութիւն ունեն և որ մարմնական գործողութիւնները պայմանաւորում և շատ դէպքերում նոյն իսկ պատճառ են լինում հոգեկան գործողութիւնների: Մարմնական խանգարումները չեն կարող չը շօշափել հոգեկան կեանքը և նախ և առաջ մարմնի զարգացման պայմանները միշտ ազդում են մանուկների և երիտասարդ մարդկանց հոգեկան կեանքի վրա: Իրաւացի են այն բժիշկներն ու մանկավարժները, որոնք տրամադիր են անհատի մտաւոր զարգացման աչքի զարկող որևէ թերութիւնը բացատրելու ֆիզիքական խանգարումներով: Եթէ այդպէս է, ուրեմն հոգեկան տրամադրութիւններն էլ մարմնականի նման ժառանգական պիտի լինեն և ժառանգականութեան օրէնքը կայ ոչ



միայն բնախօսական, այլ և հոգեկան աշխարհում, որով և յայնի է դառնում այդ օրէնքի ամբողջ ճակատագրական նշանակութիւնը: Մարմնական առաւելութիւններին ման՝ բարոյական և մտաւոր առաւելութիւններն էլ պէտք է ժառանգաբար անցնեն յաջորդ սերնդին, եթէ միայն, ի հարկէ, ֆիզիքական պատճառներ՝ առաջ չի եկել այլասեռում: Հոգեբուժութեան (պսիխատրիա) և նրա օժանդակ գիտութիւնը կազմող նեարդագիտութեան մէջ արտոնների ժառանգական լինելը ամենաէական և ճակատագրական գաղափարն է, և այն, ինչով որ այդտեղ հիւանդոտ երեւոյթներն են բացատրում, անկասկած շատ կարևոր է, երբ բացատրում ենք և նորմալ հակումները: Ինչպէս հոգեկան հիւանդութիւնների տրամադրութիւնները, այնպէս էլ զեղխութիւնները, բարոյական թերութիւնները և մտաւոր պակասութիւնները ժառանգաբար անցնում են սերնդից սերունդ: Ծնողների թերութիւններն ու թուլութիւնները կրկին արտայայտւում են զաւակների և յաջորդ սերունդների մէջ և ճակատագրական դառնում: Այդպիսով ժառանգականութեան ուժը ժամանակակից մարդկանց աչքում ահագին չափ ու ծաւալ է ստանում: «Մինչև երրորդ և չորրորդ սերունդ» ազդող հին անէծքը նոր նշանակութիւն է ստանում և ժառանգականութիւնը բռնում է դեռ ևս հին դարերում ընդունւած ճակատագրի տեղը: Թէ ոճրագործութիւնը և թէ հանճարը նոր տեսութեամբ, նոր թէօրիայով արդիւնք են արամադրութիւնների և հակումների ժառանգականութեան:

Վերոյիշեալ գիւտերի և գաղափարների շնորհիւ

մանկավարժութեան զրութիւնը փափուկ է դառնում: Եթէ անհատականութեան վրա իր զօրեղ ազդեցութիւնն է թողնում ժառանգականութիւնը, եթէ ժառանգականութիւնը անարգել և անսահման կերպով որոշում է մարդու ինքնուրոյնութիւնը, այն ժամանակ այլ ևս ինչ սսպարէզ է մնում դաստիարակութեանը: Ճիշտ է՝ այն ժամանակ էլ դաստիարակութիւնը գոյութիւն կունենայ, սակայն նրա նպատակը պէտք է լինի միայն նեղ մտքով վերցրած օգտակարութիւնը: Նա պէտք է միայն աշխատի՝ ժառանգականութեան և ծընընդեան շնորհիւ որոշ կերպով տրամադրւած անհատին հնարաւորութիւն տալ գոյութեան կուխն դիմատին հնարաւորութիւն տալ գոյութեան կուխն դիմատին անդամն է այդ անհատը համարւում և որից կախում ունի: Մի այդտեսակ մանկավարժութիւն պէտք է ձգտի անհատի օգտակար ուժերը զարգացնելու և նրան կեանքի համար անհրաժեշտ տեղեկութիւնները հաղորդելու: Նա՝ ընտելացնելով և օգտակար շարժառիթներ բերելով, կը սովորիցնէր անհատին հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող օրէնքներին հրպատակելու: Սակայն դրանով բոլորովին կը վերջանար և դաստիարակութեան դերը. նա այլ ևս չէր կարողանայ երազել թէ ինքը «կարող է մարդկանց ուղղել և կերպարանափոխել», այն ժամանակ նա իրաւունք չէր ունենայ պահանջելու, որ ինքը լինի կրթիչ (խօսքիս իսկական իմաստով) և օրգանապէս կերպարանափոխիչ ուժ: Մի խօսքով՝ բանական դաստիարակութեան միակ ձեւը, որ կարող էր գոյութիւն ունե-



նալ այդ դէպքում, դա գոյութեան կուրի համար նախապատրաստութիւն տալը կը լինէր: Այլ ևս ի՞նչ միտք կունենային մանկավարժական իդէալները. դրանք միշտ անիրագործելի կը մնային. էլ ի՞նչ նպատակ կունենար անհատի բնաւորութեան պակասաւոր կողմերի դէմ կուելը կամ երեխաների զգացմունքները վրա ազդելը. այդ ամենը միշտ էլ կը լինէր մի ապարդիւն կուր և ինքնախաբէութիւն:

Չը կայ մի աւելի ճշտող միտք, քան այդ միտքը, մի միտք, որ կարող է ոչնչացնել ամեն մի ցանկութիւն մարդոց լաւագոյն ապագայի համար աշխատելու և հէնց սաղմի մէջ խեղդել դաստիարակչական ամեն մի իդէալիդմ: Եթէ այդպէս լինէր, իւրաքանչիւր մայր պէտք է կատարեալ յուսահատութեան մէջ ընկնէր, այն համոզմունքի գալով, որ իր երեխայի պակասութիւնները պէտք է դիմադրեն ամեն տեսակ ազդեցութեանը, որովհետև նրա բնաւորութիւնը արդիւնք է անցեալ սերունդներից ստացած ժառանգութեան: Իւրաքանչիւր դաստիարակ մի որոշ սահմանին հասնելուց յետոյ պէտք է նկատէր դաստիարակութեան անզորութիւնը և կորցնէր թէ գործելու եռանդը և թէ հաւատը: Այս գրքի հեղինակը ստիպւած է այստեղ խոստովանելու, որ ինքը դեռ իբրև երիտասարդ ուսուցիչ իր ժամանակին շատ է տանջւել այդտեսակ ճշտող մտքից, և հաւանորէր նոյն վիճակի մէջ են եղել նաև իր պաշտօնակիցներից շատերը: Եւ դաստիարակութեան նշանակութեան այսպիսի ըմբռնումը ոչոք այնպէս ի չարն գործ չի դնում, ինչպէս հասարակ մահ-

կանացուները, որոնք ամենից շատ սիրում են ծաղրի ենթարկել ամեն մի ձգտում դէպի բարձրը, վսմը և նպատակաւորմարը. նրանց համար բնականաբար դաստիարակութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ լոկ վարժութիւն և նախապատրաստութիւն գոյութեան կուրի համար: Վերև բերւած հայեացքների մէջ նրանք գտնում են այն բանի գիտական արդարացումը, ինչ որ իրանք գործնական կեանքումն են տեսնում:

Սակայն մտածողութեան վերոյիշեալ եղանակը սխալ է և պէտք է սխալ հետեւանքների հասցնի, որովհետև նա միակողմանի է և ի նկատի ունի գիտական աշխարհայեացքի միայն մի կէտը: Մեր դարի մարդիկ կուրացած և հիպնոզացած են երևում ժառանգականութեան գաղափարով: Նրանք չափազանցում են ժառանգականութեան գորութիւնը և դրա համար էլ քիչ նշանակութիւն են տալիս անհատի զարգանալու ընդունակութեանը:

Ամենից առաջ նկատենք, որ միայն ճակոմենկոն ու տրափադրութիւններն են և ոչ թէ արդէն զարգացած յատկութիւններն և կամքի ուղղութիւնները, որ ժառանգաբար մէկից անցնում են միւսին: Հին սերնդի նոյն իսկ զարգացած և երկար ժամանակից ի վեր ժառանգած առանձնայատկութիւնը նոր սերնդի մէջ երևան է գալիս իբրև սաղմ կամ իբրև հակում, իբրև տրամադրութիւն, որ նոյն տեսակ առանձնայատկութեան զարգանալն է հեշտացնում և որը սակայն պէտք է ենթարկել արտաքին ազդեցութեան, որպէս զի իսկապէս երևան դայ նոր սերնդի մէջ: Այդ ժառանգա-

1007  
33/68



կան տրամադրութեան զօրութեան աստիճանները տարրերը են լինում: Կայ այնպիսի տրամադրութիւն, որի սաղմը շատ թոյլ է և ուսումնասիրողի համար հազիւ նկատելի, կայ և այնպիսի տրամադրութիւն: որ առիթը պատահած դէպքում ցոյց է տալիս անդիմադրելի զօրութիւն: Նոյն իսկ ամենաթոյլ հակումը նպատակայարմար հոգատարութեամբ կարելի է ուժեղացնել և բարձրացնել մինչև մի որոշ աստիճանի, և ամենազօրեղ հակումը խելացի խնամատարութեամբ կարելի է մեղմացնել, անհատին հեռու պահելով այդ հակման զարգացնալուն նպաստող իրերից և առիթներից, այսինքն՝ զրկելով այդ հակումը մանդից, կամ ուրիշ հակառակ հակումներն և տրամադրութիւնները ուժեղացնել, անհատի օրգանիզմի կենսական ուժերից օգտւելով: Գրա համար էլ իւրաքանչիւր լարւած և երկարատև մտաւոր աշխատանք թուլացնում է վավաշոտութեան և առհասարակ կոպիտ բնազդների ուժը: Հէնց այդ փաստի վրա է հիմնւած իւրաքանչիւր բարձր կուլտուրան: Ի հարկէ, մի բան, որին բնութիւնը միանգամ մարդուս տրամադրել է, արտաքին հանգամանքները չեն կարող բոլորովին մեղցնել, արմատախիլ անել, իսկ միւս կողմից, երբ մարդու մէջ որևէ բնական տրամադրութեան նոյն իսկ սաղմը չը կայ, գաստիարակութիւնը բնականաբար այդ չի կարող առաջացնել և զարգացնել: Օրինակի համար, չի կարելի մէկին երաժշտական զարձնել, եթէ նա բոլորովին աներաժշտական է: Սակայն արտաքին ազդեցութիւններն և ամենից առաջ նպատակայարմար գաստիարակութիւնը

մարդուն այնպէս են զարգացնում, որ նա իր նախահայրերից զգալի կերպով տարբերում է: Չը լինէին այդ երկու պատճառները, մարդս բոլորովին ուրիշ բնաւորութիւն կունենար: Ուստի մենք կարող ենք գալ այն եղրակացութեան, որ ժառանգականութիւնը և բնական հակումներն ու տրամադրութիւնները անհատի զարգացումը միայն սահմանափակում են և ոչ թէ կատարելապէս նախորոշում:

Սակայն երբեմն լինում են նաև այնպիսի հակումներ ու տրամադրութիւններ, որոնք անհատի մէջ այնպիսի ուժով են երևան գալիս, որ նրանց զօրեղացնելու համար պէտք էլ չի լինում արտաքին ազդեցութեան: Կան և այնպիսի տրամադրութիւններ, որոնց անկարելի է թուլացնել կամ արմատախիլ անել արտաքին ազդեցութեան ամեն տեսակ փորձերով: Առաջին տեսակի տրամադրութիւնները յատուկ են հանձարեղ անհատներին, իսկ երկրորդը՝ հիւանդոտ արարածներին: Սակայն երկուսն էլ ծայրահեղութիւններ են, որոնք միայն բացառութիւն են կազմում և հազադէպ են: Չօրեղ տաղանդն էլ կարիք է զգում ընդհանրապէս կատարելագործելու և արտաքին ազդեցութեան ենթարկելու, եթէ ուզում է ապագայում աւելի ևս զարգանալ: Եւ հէնց ակտաբանութիւնը ցոյց է տալիս, որ ոչ թէ ինքը հիւանդութիւնը, այլ հիւանդութեան միայն տրամադրութիւնն է ժառանգական, կան, ի հարկէ, մի քանի բացառութիւններ: Այդ փաստը հաստատել է բժշկական դիտութիւնը վերջին տասնամեակում մարմնական հիւանդութիւնների մեծամաս-



նութեան նկատմամբ, չը նայելով որ դրանք առաջ-  
ներում ժառանգական էին համարուում: Նոյնը հաստա-  
տուում է նաև հոգեկան հիւանդութիւնների և թուլու-  
թիւնների վերաբերմամբ: Կարելի է հաստատապէս ա-  
սել, որ նոյն իսկ ժառանգական ծանր արատը դաս-  
տիարակութեան և նպատակայարմար կենցաղավարու-  
թեան շնորհիւ զգալի չափով ուղղուում է: Ամենից ա-  
ռաջ Ֆիզիքական և մտաւոր կեանքի մէջ հղած սերտ  
կապը միջոց և հնարաւորութիւն են տալիս դաստիա-  
րակին սպառնացող վտանգի առաջը զգալի չափով առ-  
նելու: Ինչպէս որ առհասարակ անհատի Ֆիզիքական  
կրթութեան վրա պէտք է նպատակայարմար ուշադ-  
րութիւն դարձնել նրա մանկական փափուկ և վտանգա-  
ւոր տարիներում, այնպէս էլ արատ ունեցող անհա-  
տին կարելի է բնական և բուժիչ կենցաղով շատ զէպ-  
քերում արատաւորութեան հետևանքներից և հիւան-  
դոտ տրամադրութեան արտայայտութիւնից փրկել:  
Վերոյիշեալ ուրախալի հանգամանքը, որի վրա հին  
ժամանակներում թէ բժիշկները և թէ դաստիարակ-  
ները արժանաւոր ուշադրութիւն չէին դարձնում,  
կազմում է նորագոյն մանկավարժութեան ամենաօգ-  
տակար հիմունքներից մէկը:

Ժառանգականութեան օրէնքի զօրութեան սահ-  
մանափակ լինելը, ինչպէս որ մենք այս բոլորէիս նկա-  
րագրեցինք, համարուում է մի հաստատուն և անկաս-  
կածելի փաստ: Այդ փաստն այժմ ընդունում են ժա-  
ռանգականութեան գաղափարի նոյն իսկ միակողմանի  
գիտական ներկայացուցիչները: Բացի դրանից մենք

գոնէ իբրև ենթադրութիւն պէտք է իւրացնենք այն  
լայն և արդիւնաւէտ աշխարհայեացքը, որ յայտնի է  
«զարգացման տեսութիւն» անունով և որը ազդել է ոչ  
միայն ժամանակակից կենսաբանութեան, բիօլօգիայի  
վրա, այլ և ընդհանրապէս մարդկային իրերի մասին  
հղած հայեացքների մեծ մասի վրա:

Զարգացման տեսութիւնը ամենից առաջ մատ-  
նացոյց է անում այն հանգամանքի վրա, որ իւրա-  
քանչիւր կենդանի էակ իր կեանքի ամբողջ տևողու-  
թեան ընթացքում բոլորովին միևնոյն յատկութիւն-  
թեան ընթացքում բոլորովին միևնոյն յատկութիւն-  
ները չունի. նա յարմարուում է իր շրջապատին, իր  
զոյութեան արտաքին պայմաններին և կարող է այդ-  
պիսով որոշ չափով իր առանձնայատկութիւնները փո-  
խել կամ նորերը ձեռք բերել: Վերոյիշեալ ուսմունքի  
օգնութեամբ ընդունւած է արդէն բացատրել երևոյթ-  
ներից շատերը. ընդունւած է նաև այն, որ կեանքի  
մէջ ձեռք բերած այդ յատկութիւններն էլ ժառանգա-  
բար անցնում են մէկ սերնդից միւսին, սակայն այդ  
բանը լինում է նւազ չափով, քան հին և բնածին յատ-  
կութիւնների ժառանգաբար անցնելը: Իւրացրած յատ-  
կութիւնները հետզհետէ աւելի զարգանում են և զօ-  
րանում նոր և նոր սերունդների մէջ: Դրանով ժա-  
ռանգականութեան կողքին փոփոխելիութիւնը մի երկրորդ  
և ոչ պակաս նշանաւոր բնական սեփ է: Ինչպէս ժա-  
ռանգականութիւնը ներկայացնում է կենդանի բնու-  
թեան մէջ հաստատուն և միևնոյն ժամանակ պահպա-  
նողական տարր, այնպէս էլ դրան իբրև անհրաժեշտ  
հակազդեցութիւն՝ երևան է գալիս փոփոխելիու-



թիւնը—յարմարեւելու օրէնքը: Չը նայելով որ ժառանգականութեան հետեանքները անմիջապէս պարզ նկատելի են, չը նայելով որ նրա ուժի շնորհիւ են որոշուում կենդանի էակների կերպարանքը, համախմբումը, ըստ տեսակների բաժանումը, սակայն ոչ պակաս ուժեղ է նաև յարմարեւելու, փոփոխեւելու ուժը, որ ներգործում է ծածուկ, աստիճանաբար և նման է այն անընդհատ կաթող ջրի կաթիլներին, որոնք ժայռեր են ծակում: Այն, այդ ուժն է իսկական ստեղծագործական սկզբունքը օրգանական աշխարհում, որովհետև միայն զրա շնորհիւ է բնութիւնը նոր ձևեր առաջ բերում: Բայց այդ երկու ուժերի մրցութիւնից կամ նըրանց հակառակ ու փոխադարձ ազդեցութիւնից է ծագում զարգացումը, որից ամբողջովին կախած է կենդանի բնութեան ձևակերպելը: Զարգացման տեսութիւնը կատարելապէս չի ընդունում այն անշարժութիւնը և անփոփոխելիութիւնը, որին ժառանգականութեան միակողմանի հայեցակէտը դատապարտում էր օրգանական կենդանի էակներին: Մենք արդէն վերը տեսանք, որ ոչ թէ յատկութիւնները, այլ զրանց տրամադրութիւններն է անհատը իր հորից և մօրից ժառանգում և իր հետ աշխարհ բերում: Իսկ թէ այդ տրամադրութիւններից որոնք են երևան գալիս կամ հէնց սաղմի մէջ ոչնչանում ու մեռնում, այդ բանը կախած է գոյութեան արտաքին պայմաններից և շրջապատի ազդեցութիւններից: Կեանքը կարող է հաւասար տրամադրւած էակներից բոլորովին տարբեր անհատներ զարգացնել և որովհետև վերջիններս իրանց ձևը բե-

րած բնաւորութիւնը ժառանգական օրէնքի հիման վրա տալիս են իրանց յաջորդ սերնդին, զրա համար էլ այդ նոր սերունդից սկսւում է մի նոր տեսակի զարգացում: Դրանով ուրեմն առանձին անհատի զարգացումը իր որոշ շրջանակի կամ որոշ սահմանների մէջ է դրւում: առանձին օրգանիզմի զարգացման ընդունակութիւնը սահմանափակւած է, սակայն ամբողջ տեսակը փոփոխական է և նրա բոլոր հակումներն ընդունակ են ուժեղանալու և զարգանալու:

Այդպիսով զարգացման տեսութիւնը բարձրացնում և ընդարձակում է անհատի նշանակութիւնը: Այդ տեսութիւնը ամբողջութեան (տեսակի) զարգացումը բացատրում է մասնաւորի (անհատի) զարգացումով, որովհետև մասնաւոր անհատը ուրիշ աւելի շատ բաներ է ժառանգաբար հաղորդում իր յաջորդին, քան ինքն է ժառանգել, և զրա շնորհիւ տեսակի, ցեղի կամ սեռի մէջ առաջ է գալիս շարժողութիւն, փոփոխութիւն և առաջադիմութիւն:

Հէնց այս նոյն զարգացմանը մօրթոյս յաճախ կարող է մի որոշ ուղղութիւն տալ. սա ամենագլխաւոր կէտերից մէկն է, որ մենք միշտ պէտք է ի նկատի ունենանք: Նա որոշ սահմաններում կարող է նպաստել, որ բոյսերն և կենդանիները ցանկալի յատկութիւններ ձեռք բերեն, ոչ ցանկալի տրամադրութիւնները թուլանան և հետզհետէ մեռնեն: Տնային կենդանիների ընտանեցները, ծաղիկների և գտուղների տեսակների ազնւացները մեր ասածի ամենալաւ օրինակներն են, և ինչպէս յայտնի է Դարվինն, որ առա-



Ղին անգամ գիտնականօրէն հիմնաւորեց զարգացման տեսութիւնը, օգուել է մասամբ էլ գործնական կեանքի փորձառութիւնից: Եթէ նոյն իսկ մի կողմ թողնենք իսկական պատւաստումը, այն ժամանակ էլ աչքի է ընկնում այն փաստը, որ երբ մի բոյս տեղափոխում ենք մի հողից մի ուրիշ հող և որոշ ձևով խնամում ու պահպանում, այդ բոյսը զարգացնում է, ձեռք է բերում այնպիսի յատկութիւններ, որ այդ միևնոյն բոյսը առաջւայ հողի վրա, առանց մեր խնամքի և հոգատարութեան երբէք չէր ձեռք բերի: Ընտանի կենդանին վայրենանում է, երբ նա ընկնում է վայրի տեղեր և ապրում է վայրենի գաղաններէ մէջ. վայրենի կենդանիներից մի քանիսը ընտանի են դարձել այն ժամանակ, երբ մարդիկ սկսեցին նրանց պահել որոշ պայմաններում, որոշ ձևով կերակրեցին և պահպանեցին նրանց:

Թէ բոյսերի և թէ կենդանիների վրա ամենից առաջ նկատելի են երկու տեսակ ազդեցութիւններ, որոնց շնորհիւ կատարում է ցանկալի զարգացումը. առաջինը՝ շրջապատի, հողի յատկութեան, կլիմայի և կերակրի ընդհանուր ազդեցութիւնն է, իսկ երկրորդը՝ մարդու անմիջական ներգործութիւնը, օրինակ՝ երբ այգեպանը պատւաստում է բոյսը, զանազան նիւթերով պարարտացնում է հողը, կամ երբ հովիւը կանոնաւորում է իր կենդանիների կենցաղավարութեան ձևը: Թէ որքան մեծ են այն փոփոխութիւնները, որոնք վերոյիշեալ ազդեցութիւնների շնորհիւ տեղի են ունենում առանձին էակների առանձ-

նայատկութիւնների մէջ, այդ բանը բազմաթիւ օրինակներով ցոյց է տալիս գործնական կիանքը: Շատ բնական է, որ բնաւորութեան արմատական յեղաշրջումը կատարւում է փոփոխւած, նոր ստացած յատկութիւնների երկարատև ժառանգականութեան շնորհիւ:

Այժմ տեսնենք, թէ ինչ է հետևում զարգացման տեսութեան վերոյիշեալ հիմնական հայեացքներից մեր շարցի—այն է՝ դաստիարակչական գործունէութեան հնարաւորութեան, էութեան և նշանակութեան համար:

Ուղիղ է այն, որ մարդը, ինչպէս և իւրաքանչիւր կենդանի արարած, իր արամադրութիւնները ստանում է ժառանգաբար և այդ ժառանգած տրամադրութիւններով մի անգամ ընդ միշտ սահման է դրւում թէ ինչքան կարելի է ընդհանրապէս նրան զարգացնել: Սխալ է այն կարծիքը, իբր թէ մարդս ոչ այլ ինչ է, եթէ ոչ իր ստացած դաստիարակութեան արդիւնքը. իւրաքանչիւր դաստիարակութիւն ստիպւած է այնտեղից սկսել, ինչ որ անհատի կազմակերպող բնութիւնը նախապատրաստել է:

Միւս կողմից էլ՝ նօրմալ մանկան օրգանական տրամադրութիւններն էլ սահմանափակ և անշարժ չեն, ինչպէս ժառանգականութեան սկզբունքի միակողմանի կողմնակիցներն են հաստատում: Ինչպէս բնութեան մակրոկոսմոսի (մեծ աշխարհի), այնպէս էլ մարդկային հոգու միկրոկոսմոսի (փոքր աշխարհի) մէջ աւելի շատ սաղմեր կան, քան թէ այդ երևան է գալիս: Իսկ թէ այդ սաղմերից որոնք են ոչնչանում և որոնք ծաղկում ու պտուղ տալիս կամ բողբոջւում, այդ



էլ յաճախ միայն կախւած է պատահմունքից կամ դանազան առիթներից: Սակայն դաստիարակն էլ այգեպանի նման կարող է այնպիսի ընտրութիւն անել, որը համապատասխանում է իր նպատակներին. նա կարող է աննդարար տաքութիւնը և կենդարարը լոյսը տարածել ցանկալի հակումների ու տրամադրութիւնների վրա և այդպիսով խուսափել ոչ ցանկալի սննդից և պաշտպանութիւնից: Իրանով իւրաքանչիւր դաստիարակ միջոց է ստանում ղեկավարելու օրգանական զարգացումը և վերջինիս համար ճանապարհ հարթելու: Ուրեմն այդպէս հասկացւած դաստիարակութիւնն էլ ունի բարձր մտքով կրթիչ ուժ և դառնում է նոյն իսկ անհատի կեանքը կերպարանափոխող մի զօրութիւն:

Բնական է, որ դաստիարակը չի կարող ազատ ընտրել իր նպատակը: Ի հարկէ այդ ընտրութիւնը սովորաբար կախւած է լինում նրա կամքից, ընդհանուր իղէալններից և գաղափարներից, բայց երբէք միակողմանի կերպով չի որոշում: Մանկան անհատական տրամադրութիւններից էլ են կախւած այդ նպատակն ու նրա ծաւալը: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է որ այդ տրամադրութիւնները, գոյութիւն ունենան, որպէս զի դաստիարակը կարողանայ ազդել: Իւրաքանչիւր դաստիարակ պէտք է ի նկատի ունենայ, որ իրան կամ երբէք, կամ միայն շատ սակաւ դէպքերում կարող է աջողել իր սանիկի մէջ միայն ցանկալի տրամադրութիւնները զարգացնել, իսկ բոլոր միւս, վատ և ոչ ցանկալի տրամադրութիւնները սաղմի մէջ մեղցնել: Նօրմալ մանկանց

ժառանգած ընազդների մեծ մասը կարելի է թուլացնել, բայց բոլորովին մեղցնել և ոչնչացնել կարելի է զրանց միայն չնչին մասը: Սրանից հետևում է այն, որ նոյն իսկ ամենամեծ խնամքով կատարւած դաստիարակութիւնը սակաւ դէպքերում կարող է բոլորովին հասնել իր ձգտած նպատակին. սակայն այդ դաստիարակութիւնը սանիկին կարող է աւելի մօտեցնել ցանկալի նպատակին, ինչպէս որ մարդկային ամեն մի ձեռնարկութիւն երբէք մէկ անգամից իր զարգացման գաղաթնակէտին չի հասնում: Սակայն շատ բան, որ դաստիարակութիւնը չի կարողանում անհատին ձեռք բերել տալ, կարող է անել տալ իրար յաջորդող սերունդների զարգացման շնորհիւ, եթէ միշտ և զիտակցաբար ձգտի միեւնոյն նպատակին, որովհետև իւրաքանչիւր նոր ժառանգած տրամադրութիւն, որ այդօրինակ օղիկցութեամբ է ծնւում և զօրեղանում, միևնոյն ժամանակ աճում է աւելի մեծ կենսունակութեամբ և աւելի ընդունակ է զարգանալու. այդպիսով յաջորդ սերունդի համար ստեղծւում է աւելի նպատաւոր զրութիւն ցանկալի տրամադրութիւնն իրենան հանելու և ցանկալի օղիկութեամբ զարգացնելու: Այն, ինչ որ քիչ քիչ անում է դաստիարակութիւնը առանձին անհատի համար, այդ միևնոյնը հետզհետև աճում և զօրեղանում է հետևալ սերունդների մէջ: Այդպիսով զարգացման վարդապետութեան հայեցակէտը դաստիարակութեան օղիկցութեանը աւելի ընդարձակ և նպատաւոր ուժ է տալիս, քան թէ ռացիօնալիզմն էր ընդունում, որը միայն անհատի զարգացումը ի նկատի







մի շարք սովորութիւններ, կարծիքներ և գործողութեան ընդգծներ: Այդպիսով մանկան զարգացումը մեծ, դուցէ և ամենամեծ մասով կախած է շրջապատի ազդեցութիւնից, դրա հետ միասին նաև սօցիալական պայմաններից (խօսքիս ամենաընդարձակ նշանակութեամբ), ընտանեկան կեանքի կազմակերպութիւնից և վերջապէս մանկանը շրջապատող անհատների ընաւորութիւնից: Ռուսոյի իսկական սխալը նրանումն էր, որ ցանկանում էր իր էմիլին վերոյիշեալ սօցիալական և անհատական պայմաններից անջատել և դնել վերացական առանձնութեան մէջ, ուր նրա նոյնպէս վերացական և իդէալական դաստիարակը իր սանիկի զարգացումն է ղեկավարում, առանց ենթարկելու որ և է խանդարող արտաքին ազդեցութեան: Այդօրինակ դաստիարակութիւն գոյութիւն չունի և գոյութիւն էլ չի ունեցել, եթէ ի նկատի չունենանք մի քանի բացառութիւններ: Միշտ գոյութիւն ունի շրջապատի ազդեցութիւնը: Իւրաքանչիւր դաստիարակի պարտականութիւնն է մանկան շրջապատը դաստիարակութեան նպատակի համեմատ այնպէս բարեկարգել, ինչպէս որ այգեպանը բոյսի համար յարմար հող է ընտրում: Եթէ մանկան վրա ներդրում են ցանկալի ազդեցութիւններ, այն ժամանակ նրա յարմարելու ուժը ինքն իրան կը նպաստի այն բանին, որ մանկան հակումը, սովորութիւնները և կարծիքները այդ ազդեցութիւնների համեմատ կազմակերպւեն: Սովորութիւնը կազմում է ամեն մի իսկական դաստիարակութեան հիմքը և նախնական սաստիճանը:

Միայն այդ հիմքի վրա կարող է կառուցել իւրաքանչիւր մանկավարժի անմիջական ձեռկարկութիւնը—դաստիարակութիւնը: Դաստիարակութիւնը մի քանի դէպքերում սովորութեամբ իւրացրածը կը լաւացնի և կընդարձակի, միւս դէպքերում կամրացնի և կը գորեղացնի և այդպիսով մանուկին կը տանի դէպի գիտակցական իմացականութիւնն ու կամքը և նրան կուղղի դէպի որոշած նպատակը:

Այժմ եթէ մի ընդհանուր հայեացք ձգենք մեր վերև պարզաբանւած հայեցակէտի վրա և վերջինս համեմատենք ռացիօնալիզմի հայեցակէտի հետ, կը ստանանք հետեւեալ եզրակացութիւնը:

Դաստիարակութեան գորութիւնը սահմանափակ է: Այդ գորութիւնը չի կախւած միայն դաստիարակի կամքից և ընդունակութիւնից. մանկան անհատական տրամադրութիւնները դաստիարակին մատնացոյց են անում որոշ ճանապարհներ ու նպատակներ և այդպիսով որոշ չափով սահմանափակում են նրա գործունէութիւնը: Այդ տրամադրութիւնները շրջապատի ազդեցութիւններից երբեմն ոչ պակաս անյաղթելի արգելքներ են լինում դաստիարակի համար:

Ինչպէս որ չը պէտք է չափազանցնել և հաւատալ թէ դաստիարակութիւնը ամենակարող է, այնպէս էլ չը պէտք է կարծել, թէ նա կարողութիւնից բոլորովին զուրկ է:

Դաստիարակութեան մասին մեր բոլոր ասածները ի մի ամփոփենք:

Իւրաքանչիւր ճշմարիտ կրթութիւն օրգանական զարգացում է: Այդ զարգացումը հարթելը, նրան ուղ-



դուժինն տալը և դէպի մի որոշ նպատակ տանելը իսկական դաստիարակչական արւեստի գործն է: Մանկան հոգին ոչ փափուկ և ամեն բանին մատչելի մտմ է, որ դաստիարակը կարողանայ նրա հետ ուզածի պէս վարւել, և ոչ էլ կարծր ու անմատչելի ֆիզիքական ուժի կենդրոն, որի չափն ու տեսակը մի անգամ ընդ միշտ որոշւած է, որպէս զի դաստիարակը նրա վերաբերմամբ բոլորովին անզօր լինի: Դաստիարակը մանկան հետ պէտք է այնպէս վարւի, ինչպէս այգեպանը իր ծաղկի կամ ծառի հետն է վարում: Նա իր աչքը շարունակ պէտք է յառի մանկան վրա, նրա բնութիւնը պէտք է ուսումնասիրի և դրանից օգտւի իր նպատակների համար, նրա զարգացման ընդունակութիւնը քննի, ճանապարհ ցոյց տայ, պէտք է ստեղծի այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են մատաղ էակի համար, և պէտք է որոշի այն նպատակները, որոնց պէտք է ձգտի մանուկը: Եւ եթէ բոլոր դէպքերում ընդթիւնն ու պայմանները աւելի շատ բան են անում, քան դաստիարակը կարող է ստեղծել, եթէ ժառանգական տրամադրութիւնը և զարգացման պայմանները միասին վերցրած աւելի զօրեղ են, քան թէ այգեպանի հովանաւորող, ղեկավարող և կազմակերպող ձեռքը, այն ժամանակ էլ նա չը պէտք է յուսահատւի և ետ քաշւի: Դաստիարակի յարատև և նպատակայարմար գործունէութիւնը ժամանակով, յաջորդ սերունդների մէջ փառաւոր յաղթութեամբ է պսակւում և առատ պտուղ է տալիս:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐ-ՔՈՅԿՆԵՐԸ

- I Երեխայի կրթութիւնը մինչև 6-տարեկան հասակը—  
Հենրիկ Վերնիցի թարգմ. Ստ. Լիսիցեանի 25 կ.
- II Երեխայի ըունը—Վիրենիուսի, թարգմ. Ստ. Լիսի-  
ցեանի: 15 կ.
- III Երեխայի ազատագրութիւնը, Կ. Հ. Վենտցելի,—Մե-  
ծերն ու փոքրերը—տիկ. Իսահակսէնի, թարգմ.  
Ստ. Լիսիցեանի: 15 կ.
- IV Սովորութիւնները, նրանց նշանակութիւնը ու կըր-  
թութիւնը—Կ. Ենիցկու, թարգմ. Մ. Ադ. և  
Ստ. Լ. 15 կ.
- V Պարզենիւրը ու պատիժները ընտանեկան դաստիա-  
րակութեան մէջ—Ֆեսենկօի, թարգմ. Մ. 15 կ.
- VI Ո՞րտեղից է աշխարհ եկել քո փոքրիկ եղբայրը—  
Գալանդաուէրի, թարգմ. տ. Հ. Թոփչեանի: Մա-  
նօթացրէք կեանքի ծագման հետ—տիկ. Սելմերի,  
թարգմ. Ստ. Լ. 15 կ.
- VII Ընտան. դաստիարակութեան նպատակներն և հի-  
մունքները.—Պ. Կապտերի, թարգմ. Միս Աս. 15 կ.
- VIII Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան—  
Ակսել Արստալի, թարգմ. Ստ. Լիսիցեանի 15 կ.
- IX Մանուկների աշխատանքն ընտանիքում. 15 կ.
- X Տղան և աղջիկը անցողական շրջանում, Բուլի և Նել-  
սէնի. 10 կ.
- XI Մանկական ազատութիւնն ու ուրախութիւնը, Օտտօ  
Էրնստի, թարգմ. Բաբայեանի 20 կ.
- XII Փողովրդական մանկական խաղեր, խմբագրեց  
Ստ. Լիսիցեան. 20 կ.
- XIII Ընտանեկան յարաբերութիւններն ու նրանց կրթիչ  
նշանակութիւնը, Ա. Ն. Օստրոգորսկու, թարգմ  
Լ. Շ. 20 կ.
- XIV—XV Մանկան հոգին, Սիկորսկու. 45 կ.

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Ճանապարհածախսը՝ 1 ո. ոչ պակաս դնողների համար  
խմբագրութեան վրա է՝ Тифлисъ, Редакция „Аскеръ“.





44.571